

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆ ԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1883 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Գ.

40 ԳՈՒՆԻՍ 1883



Կ. ՊՕԼԻՍ

1883

ԱՁԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1883 ԱՄԻՆ

Ն Ի Ս Տ Գ.

10 ՅՈՒՆԻՍ 1883

ՆՈՒՍԴԱՀ. — Մատթէոս Եպիսկ. Իզմիրլեան (Աւստրալիայ)

ԱՏԵՆԱՊԵՏ. — Յարութիւն Էֆ. Թիրեաքեան

ԱՁԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՄՆԷՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄՆԷՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Ա. Վիճակ

- 1 Սիմէոն Եպս. Սէֆէրեան
- 2 Կարապետ Վ. Բագրատունի
- 3 Կարապետ Քահ. Սէֆեան
- 4 Վահան Վրդ. Տ. Մինասեան
- 5 Մատթէոս Եպս. Իզմիրլեան
- 6 Յովհաննէս Քահ. Մկրեան
- 7 Գրիգոր » Աճէմեան Բ Պ
- 8

Գ. Վիճակ

- 9 Գրիգոր Եպիս. Տ. Պօղոսեան Բ Պ
- 10 Յակոբ Վ. Ա. Փափաղեան
- 11 Խորէն Քահ. Փէշկիւմեան 2
- 12 Ոսկի Քահ. Օհանեան

Դ. Վիճակ

- 13 Գէորգ. Վ. Բուսճուզլեան Բ 2
- 14 Եղիշէ » Այվաղեան Բ
- 15 Յովհաննէս Վ. Արշարունի Բ
- 16 Յովհ. Քհ. Հիւնքեարպէյէնտ.

Ե. Վիճակ

- 17 Խորէն Արքեպ. Նար-Պէյ
- 18 Յովհաննէս Վ. Փափաղեան Բ 2
- 19 Գարեգին » Թաթարեան
- 20 Սուքիաս Քահ. Ստեփանեան

- Բ Բացակայութիւն առաջին
- 2 » երկրորդ
- 4 » բանաւոր սլատճառաւ

Ա. Վիճակ

Գում-Գաբու, Կետիկ-Փաշա. Էս. Գում-Գաբուի դուրս

- 21 Գրիգոր Պէրպէրեան
- 22 Կարապետ Աղարդմաճեան Բ
- 23 Բարթող Քիւրքճիպաշեան Բ
- 24 Գէորգ Ապտուլլահեան Բ 3
- 25 Յ. Մէրեթ-Գուլի Բ Պ
- 26 Տիգրան Հիւնքեարպէյէնտ.
- 27 Աւետիս Սուրենեան
- 28 Տօքթ. Յ. Թիրեաքեան
- 29 » Այվաղեան
- 30 Գէորգ Այվաղեան Բ Պ
- 31 Յակոբ Եէմէնիճեան
- 32 Յակոբ Գուրգէն
- 33 Տիգրան Շիւմլիւզկէրտան
- 34
- 35
- 36
- 37

Բ. Վիճակ

Պէշկիւրաշ

- 38 Բարսեղ Հալաճեան
- 39 Յովհաննէս Քէրէստէճեան
- 40 Մելքոն Պարոնիկեան
- 41 Լեւոն Քարամաճեան Բ Պ
- 42 Մարուգէ Ֆէշկեան Բ
- 43 Պօղոս Էնքսէրճեան Բ
- 44

Իսկիւտար Ս. Խաչ

- 45 Սիմէոն Ֆէշկեան Բ 3
- 46 Գարրիէլ Նորատունկեան Բ 3

47 Աթանազիէ Արապեան 48

Իսկիւտար Ս. Կարապետ

- 49 Միհրան Պահճէպփուլ. Բ
- 50 Պօղոս Թորգոմեան
- 51 Տրդատ Փափաղեան Բ 2
- 52 Յակոբ Հաճեան

Գ. Վիճակ

Գաւառ-Բաշա

- 53 Գաւառ 2երադ Բ 2
- Բերա

54 Գրիգոր Սէլիմիէճեան Բ Պ

55 Ղազար Հովուեան

56 Յարութիւն Պէշկեան

57 Նշան Պօլաճեան

58 Վիշէն Օրմանեան Բ Պ

59 Տեղեմաք Էքսէրճեան Բ

60

61

62

Միջագիւղ

63 Տիգրան Եռսուֆեան Բ 2

64 Մկրտիչ Գաղանճեան Բ 2

65 Մկրտիչ Դանրմեան Բ

66 Պօղոս Շիւմլեանեան Բ 2

67

Պէլգօզ Էս. Ղալաքիա

68 Միքայէլ Մամիկոնեան Բ

Գ. Վիճակ

Քուզլուճուզ Էս. Իմատի

69 Մկրտիչ Մէզպուրեան

70 Սիմէոն Պէյ Մաքսուտեան Բ 2

Գատըզիւղ	ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ	Մուշ
71 Գառնիկ Յովակիմեան	Բ Պ	121 Ստեփան փափաղեան
72 Կարապետ Հազարեան		Տիվրիկ
Նարլը-Գաբու	101 Սերովբէ Ազնաւորեան	122 Նշան Գարազաշ
73	Քեօրանեա	Բ
Եեհի-Մահալիկ Սամաթիոյ	102 Աւետիս Թընկերեան	Ձեյրուն Է. Մարաշ
74	Աղրիանուպօլիս	123
Թօփ-Գալիու	103 Յակոբ Պարոնեան	Տրապիզօն
75 Տօքթ. Կ. Հիւնքեարպէյ. Բ 3	Նիկոմիդիա	124 Յարութիւն Չէքքէզեան Բ 2
Էջուպ Ս. Եղիա Է. Ս.	104 Կարապետ Ս. Իւթիւճեան Բ	Պաղտատ
Աստուածածիւն	Ակն	125
76	105	Տիգրանակերտ
Դուրու-Ձեշմէ	106 Կարապետ Երէցեան	126 Միհրան Չօլանեան
77 Կարապետ Սիւսեան Բ 3	Արաբկիր	Վան
Հիւսար Է. Պօյաճի-Գիւղ	107 Կարապետ Խաչիկեան Բ	127 Մարկոս Աղաբէկեանց
78	Բաղէշ	Ազրամար
Նոր-Գիւղ Է. Սրեմիա	108	128
79 Եղիա Տէմիրճիպաշեան Բ 2	Պրուսա	129 Հայեպ Է. Այնթապ
Պալատ	109 Քրիստոստուր Դազարոսեան	
80 Տիգրան Բարադամեան	Եւդոկիա	Սեբաստիա
81 Մկրտիչ Կիւմրէզեան Բ 2	110 Գէորգ Ասլանեան Բ 2	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
82 Ռէթէոս Թաղէոսեան	Ամասիա	Ռուսնուգ
Քարակէօմքիւկ	111 Համբարձում Ալաճաճեան	131
83 Յովհաննէս Թորոսեան	Բալու	Բաբերդ
84 Կարապետ Փանոսեան Բ	112 Յովհաննէս Ազնաւորեան Բ	132
Ե. Վիճակ	Եղեսիա	2մշկածագ
Սամաթիա	113 Յակոբ Իւթիւճեան Բ 2	133
85 Յակոբ Արշակ Բ	Մանգըլլիս	Գաղատիա
86 Սարգիս Աղաբէկեան	114	134
87 Սահակ Ապրօ Բ	Հաճըն	Ատանա
88 Յովհաննէս Նուրեան Բ	115	135 Մինաս Չերազ
89 Սեպուհ Մաքսուտ Բ	Երզնկա	Սղերդ
90 Գրիգոր Շամտանճեան Բ	116 Ռեթէոս Պէրպէրեան	136 Մատթէոս Ալէքսանեան
91 Մ. Տ. Աճէմեան	Թեքիրտաղ	Եօղլատ
92 Ռուբէն Կիւմրէզիկէրտան Բ	117 Տիգրան Գ. Սինանեան	137
93	Կեսարիա	Մալաթիա
94	118	138 Գէորգ Վարդանեան Բ 2
Խասգիւղ	Խարբէրդ	Իզմիր
95 Սարգիս Գալուզեան Բ 2	119	139 Պապի Պապօեան
96 Ռեթէոս Թաղէոսեան	Պալքիսէր	Եգիպտոս
97 Ռուբէն Պուլկուրեան Բ 2	120 Ստեփան Գօլօշեան Բ	140 Արահամ Մուրատեան Բ
98 Մարգար Գուլաքսըզեան		
99 Յակոբ Խանտանեան		
100		

Օ Ր Ե Կ Ե Ր Գ

Ա. — Ընտրութիւն Նախաքննիչ Դիւանաց .
 Բ. — » Ելեմիայ Յանձնախմբի Ազգ. Ժողովոյ .
 Գ. — Համարատուութիւն Ազգ. Վարչութեան .

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ի բացակայութեան Ս. Պատրիարք Հօր , Ատենական Թրեքեան Էֆէնտի առժամայ Նախագահութեան հրաւիրելով զՏէր Մատթէոս Նախկուպոս Իզմիրեան , առեանը կը բանայ ժամ 7 1/2 ին , ի ներկայութեան 40 Երեսփոխանաց , որոց թիւն ի վերջէ կը յանդի 53 ի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տեարք Երեսփոխանք , ինչպէս մեր նախորդ նստին մէջ եւս ծանուցի , մինչդեռ Ազգային Ժողովոյ Ա. Ատենական պետի պաշտօնին կրնայիք աւելի արժանաւոր մի անձ կոչել , արժան զատեցիք ինձ յանձնել զայն . շնորհակալ եմ Ձեր պատուարեր բռնէն , կը հնազանդիմ Ձեր կամաց եւ կընդունիմ զայն , հակառակ ունեցած ծանր դրաղմանցս : Սակայն պաշտօնիս ձեռնարկելէ առաջ , պիտի խնդրեմ ժողովէզ որ վիճարանութեանց միջոցին կըքեր չըլլուզին եւ անձնականութիւններ չվիրաւորուին , ինչպէս երբեմն տեղի կունենան : Մեր առաջին պարտաւորութիւնն է յարգել կանոնապահութիւնը . կարելի է ծանր թուի Ձեզ այս բան , սա-

կայն փորձը ցոյց տուաւ թէ շատ անգամ դիւրար չհասկնալու չափ յառաջ կերթանք եւ չեմք զգուշանար վիրաւորիչ ակնարկութիւններէ , որոցմէ պէտք է բոլորովին հեռի մնալ , որչափ որ ալ ծանր ըլլան խնդիրք :

Այս Երեսփոխանական Ժողովը Հոյ Ազգին առաջին ներկայացուցիչ մարմինն է , ուստի կը խնդրեմ յատկապէս որ բոլորովին խոյս տամք անձնական վէճերէ եւ մանաւանդ քաղաքական ակնարկութիւններ ընելէ . ազգին ընդհանուր օգուտը մեր բեւեռացոյցն պէտք է որ լինի :

Գիտէք , Տեարք , որ այս տարի անցեալ չըջանէն մեզ կտակեալ մի քանի խնդիրներ ունիմք , որոցմէ կարեւորագոյններն են Կաթողիկոսական , եւ Երուսաղէմայ պարտուց բարձման խնդիրներն , որք Ձեր խնամտուն տնօրինութեան կ'սպասեն զոհացուցիչ լուծում մը ստանալու համար : Կը խնդրեմ , Տեարք Երեսփոխանք , որ մի միայն Ազգին օգուտը մեզ կէս նպատակի ունենալով , աշխատիմք մի սիրտ մի հոգի , զիրար հասկնամք եւ միաբան դորձեմք :

Կէտ մ'ալ կայ որոյ վրայ կուզէի ժողովոյդ ուշադրութիւնն հրաւիրել , այն է բա-

ցականութեանց խնդիրը : Ինչպէս ըսի արդէն, այս ժողովն ազգին դերագոյն ժողովն է, եւ քանի որ Զեզմէ իւրաքանչիւրն յօժարութեամբ յանձն առած է անոր անդամակցիլ եւ աշխատիլ անձնուիրաբար, կազաչեմ որ փութայր ներկայ գտնուիլ ամեն նստի, կամ գէթ բողոքում նիստերու, եւ Զեր փորձառութեամբն ու հմտութեամբը մասնակցելով վիճարանութեանց, լոյս սփռէք ներկայացեալ խնդրոց վրայ : Եթէ պիտի չարունակեմք բացակայ մնալ եւ թոյլ կերպով վարուիլ, ներեցէք ինձ ըսել թէ՛ աւելի լաւ է որ բողոքովն մեր անհատական գործերովն զբաղիմք, թողուի երեսփոխանական պաշտօնը : Ազգին շահը եւ իմ պաշտօնիս պարտականութիւնը պարտք կը դնեն վրաս, Տեառք, ընել Զեզ սոյն յայտարարութիւնը, այս կէտին վրայ աւելի ծանրանալ չեմ ուզեր, այլ Զեզմէ իւրաքանչիւրին խմատութեան կը թողում զարժանն խորհիլ, եւ նոր շրջանի բացման առթիւ յաջողութիւն մաղթելով ժողովոյդ աշխատանաց, կանցնիմ ատենական գործողութեանց :

4.

Բացակայութիւնը

Ատենապետ էֆէնտի կը յայտնէ թէ Ս. Պատրիարք Հայրն փոքր ինչ անհանգիստ լինելով, յանձնարարած է Պատրիարքական փոխանորդ Հօր Իւր այսօրեայ նիստէն բացակայ մնալն ծանուցանել ժողովին :

Երեսփոխաններէն,

Տ. Գէորգ Վարդապետ Բուսճուզլեան

Տօքթ. Վիչէն էֆ. Օրմանեան

անձնական տկարութեան պատճառաւ այսօրեայ նիստէն բացակայ մնալն զրով հաղոր-

դած լինելով Դիւանին, Ատենապետ էֆէնտի իբր օրինաւոր բացակայք՝ նշանակել կուտայ նոցա անուանքն ներկայութեան տուամարին մէջ :

Նոյնպէս Ատենապետ էֆէնտի կը յայտնէ թէ Երեսփոխաններէն՝

Գրիգոր էֆէնտի Շամտանճեան

անակնկալ եւ ստիպողական պատճառաւ իւր բացակայ մնալը ծանուցած է Դիւանին : Երեսփոխանք ոմանք զիտել տալով թէ բանաւոր պատճառ մը չէ այդ, չեն ընդունիր սոյն բացակայութեան օրինաւորութիւնը :

Հետեւաբար Շամտանճեան Գ. էֆէնտի անունը իբր պարզ բացակայ կը նշանակուի ներկայութեան տուամարին մէջ :

2.

Վաւերացումն նախորդ շրջանի ժէ եւ ներկայ շրջանի Բ. նիստերու Ատենագրութեանց .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ազգային ժողովոյ 82 շրջանի ժէ, ինչպէս նաեւ ներկայ շրջանի Բ. նիստի ատենագրութիւններն արդէն բաշխուած լինելով երեսփոխանաց, նախ ժողովոյդ վաւերացման կենթարկեմ ժէ նստի ատենագրութիւնը, եւ եթէ զիտողութիւն ունեցողներ կան, կը հրաւիրեմ զանոնք խօսք առնուի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Էջ 352, Սիւնակ Ա. — Այդ նստին մէջ եւ չըսի թէ «Ազ. նստրեան Յովհաննէս էֆէնտին տեսնելով, յայտնեց ինձ թէ հիւանդ է եղել, եւ այլն» : Այլ ըսի թէ «Պէշիքեան Ալիքան էֆէնտի պատահելով, անկից խմացոյ թէ հիւանդ է եղեր» : — Նոյնպէս, էջ 364, Սիւնակ Ա. —

Իմ խօսքերս այնպէս մը արձանագրուած են, իբր թէ Սիւադի րոյրը Հայ ժողովուրդը Բողոքականութեան զիտել է, մինչդեռ ես ըսի թէ «1868ին երբ ի Սիւադ կը գտնուէի» 75 տունի չափ Հայեր Բողոքականութեան զիմերու համար անոնց տուամարին մէջ արձանագրուած էին : Կը խնդրեմ որ այս երկու կէտերն եւս ուղղուին :

ՓԱՓԱԶՆԱՆ Ս. ԷՖ. — Ժէ. նստի Ատենագրութեան մէջ զիմերական տրոյ վրայ Ս. Պատրիարք Հօր խօսքերը քիչ մը յատուեալ տեսայ, կ'ուզէի զիտնուիլ թէ արդեօք Նորին Սրբազնութեան զիտողութեամբը եղած է այս յատուումը թէ ոչ : Նոյն օրը Ս. Պատրիարք Հայրն ինձ խօսքեր ուղղեց որք չեն արձանագրուած, եւ սակայն հրատարակուած են զրաւրաց մէջ, եւ որովհետեւ Ինքն ուլ բացակայ է այսօր, Դիւանի ուղարկութիւնը կը հրաւիրեմ այս կէտի վրայ :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Իբր Ատենագրութիւն նոյն նստի, ինձ անկ է պատասխանել Փափաղեան էֆէնտիի զիտողութեան :

Մեր մէջ սղագրութիւն չըլլալով, անկարելի է բոռ առ բոռ արձանագրել ատենաբանից մէն մի խօսքերն : Գալով Ս. Պատրիարք Հօր խօսքերուն, որչափ որ արձանագրուած էին, անոնք տօլուեցան, մոնուանդ որ Ն. Սրբազնութիւնն ուլ զիտողութիւն մը չէ ըրած իւր խօսքերուն արձանագրութեանը դէմ :

ՓԱՓԱԶՆԱՆ Ս. ԷՖ. — Իմ այսքան զիտողութիւնս կը բաւէ :

Ժէ. նստի Ատենագրութեան վրայ ուրիշ զիտողութիւն ընող չլինելով, Ատենապետ էֆէնտի, եղած զիտողութեամբը հանդերձ բրէի կը դնէ դայն, զոր ժողովն ԿԸՆԴՈՒՆԻ Եւ ԿԸ ՎԱԻԵՐԷ :

Յետոյ Ատենապետ էֆէնտի ժողովոյ վաւերացման կենթարկէ ներկայ շրջանի Բ. նստի Ատենագրութիւնը :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Գրեթէ առաջին անգամն է որ զիտողութիւն կ'ընեմ Ատենագրութեանց վրայ, թէ եւ ժամանակէ մը ի վեր զիտած եմ որ երեսփոխանաց խօսքերն խիստ համառօտ կը խմբագրուին ու արձանագրութիւնը նոցա ոչ ոնք, ոչ խօսից կարգը եւ ոչ արտայայտած ուրողջ գաղափարները կը ներկայացնեն, րայց անանելով թէ գէթ ողին կը պահուէր, կը լուի : Սակայն այս անգամ այնքան ոյլանդակ գաղափարներ եւ հակասական խօսքեր ընծայուած են ինձ, որ անկարելի է թուուի որ անցնին առանց զիտողութեան : Օրինակի համար. երես 1/4 սա խօսքը «Այս հրաժարականներն ուլ այն ատեն միայն կաւրելի է վիճարանութեան կենթարկել, երբ ճշտորեալք իրենց յանձնառութիւնն յայտնեցէ յետոյ գոյին հրաժարական մատուցանել Երեսփոխանական ժողովոյ» : Այսպիսի մի այլանդակ կարծիք յայտնած չեմ եւ երբէք, վրան զի ծաղրելի կըլլար սրահանջել թէ նախ յանձն առնուն իրենց պաշտօնն ու յետոյ գան հոս հրաժարիլ : Այլ ըսած եմ թէ «իրենց հրաժարականի խնդիրն այն ատեն վիճարանութեան նիւթ կըլլար հոս, երբ արդէն երեսփոխան ըլլային ու հրաժարական տային իւրենց ընկերակցաց» : Նոյնպէս սխալ է սա խօսքը «այս խնդիրը տակաւին տակաւ կը մնայ ընտրողաց եւ ընտրելեաց միջև» : Ես այդպէս չեմ ըսած, այլ թէ «խնդիրը տակաւին տակաւ կը մնայ ընտրողաց եւ ընտրելեաց միջև» : Երեւեաց միջև : Գործեալ. Տէր Մկրեան Հայրն կընդմիջէ զիս՝ ըսելով թէ՛ «պէտք չէր որ Վար. ճշութիւնը տեղեկագիր մեղ բերէր» : Ինձ պատասխան մը վերագրուած է առ Տէր Մկրեան ուղղեալ : Ես պարտականութիւն չեմ զգացած հերքելու իր ընդմիջումն :

Շարունակներ. «Ամենքինս ուլ կը փա-

«Խաբինք որ այսպիսի արժանաւոր անձինք
«գան բազմին Երեսփոխանական Ժողովոյ մէջ...»
ես այսպիսի չեմ ըսած, որովհետեւ սկզբունքի
վրայ խօսած եմ և ոչ անհատականութեանց :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդմիջելով) Եթէ
Կուզէք, Պէրպէրեան էֆէնտի, որ ձեր խօս-
քերը անթերի նշանակուին, պէտք է որ այս-
քան արագ չը խօսիք :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Շարունակելով)
Դարձեալ. « սակայն սոյն ընտրութեանց վա-
ւերացումը երկու պայմանաց մէջ կարելի է
«կատարել. նախ՝ ընտրելեաց արժանաւորու-
թիւնն և երկրորդ՝ իրենց յանձնառութիւնը »:
Այս խօսքը պէտք է արագորէլ սապէս. «սա-
կայն մեր այս փափաքին կատարումը երկու
«պայմաններէ կախում ունի. մին այն է որ
«ընտրողը զարժանաւորը ճանշնան ու ընտրեն,
երկրորդ՝ որ և ընտրեալը յանձնառու ըլլան
«այն պաշտօնն յոր կը կոչուին իրենց ընտրող-
«ներէն. հաս ընդունելով հանդերձ ընտրելոց
«պատուականութիւնն՝ երկրորդ պայմանն դեռ
«չէ լրացած, քանի որ և այլն »:

Քիչ մը վարը. «մինչև որ այս երկրորդ
«պարագայն չի լրանայ, Ազգային Ժողովն չի
«կրնար գրադրել անոնց հրաժարականի խընդ-
«որով »: այսպէս խօսած չեմ կրնար ըլլալ, այլ
թէ՝ «մինչև որ այս երկրորդ պայմանն չլրանայ,
«իրենց ընտրութիւնն թերի կը մնայ և հետե-
«ւապէս այս Ժողովի մէջ խնդրոյ նիւթ չկրնար
«լինիլ »: — Ե՛լ 31. Ս. Պատրիարք Զօր սլոտաս-
խանելով, «իսկ այս Ժողովս խելքերու ամբող-
ջութիւն մըն է » ըսած եմ և ոչ թէ «իսկ այս
«Ժողովս խելքերու ամբողջութիւնն է »:

ՉԵՐԱԶ Մ. ԷՖ. — (Ա. Ատենադպիր) Պէր-
պէրեան էֆէնտի, զիտե՛լ տուած սխալներէն ոմանք
այն կարգի ջնջին սխալներէն են որք միշտ
պիտի սորդին տաւանագրութեանց մէջ որքան
ատեն որ սղագրութիւն չունենամք. այսպէս

են իւր գիտողութիւնը այսպիսի բառին յա-
ւերմանը, մը բառին յաղաւմանը և ուրիշ հա-
մանման թերութեանց դէմ: Գալով սկզբունքի
սխալներուն որք կրցած են սորդիլ իւր խօսից
մէջ, կը պատասխանեմ թէ Բ. նստի ստուար
տաւանագրութիւնն կէս շարտի մէջ հասցնելու
համար այն աստիճան անապարանօք խմբա-
գրուած և տարագրութեան յանձնուած է, որ
Ժամանակ չէ մնացած ձեռագիրներն ինձ ներ-
կայացնելու և միայն տարարանին մէջ փորձերն
կրցած եմ սրագորէլ, որով ստիպուած էի ըստ
կարի քիչ փոփոխել արդէն չարուած տաւեա-
ղըրութիւն մը: Ստուգիւ ես իսկ զժգոհ եմ
ներկայ տաւեաղութեանէն, բայց կը յուսամ
որ այսուհետեւ աւելի ընդարձակ Ժամանակ կը
թողու մեզ ժողովը, տաւեաղութիւններն
կարելի եղածին չափ խնամով խմբագրելու
համար:

ՊԱՐՈՆԻԿԵԱՆ Մ. ԷՖ. — Ատենադպիր
էֆէնտին կըսէ թէ Բ. նստի տաւեաղութիւնը
անապարանօք խմբագրուած է. ըստ իս, ըս-
է որ տաւեաղութիւն մը քիչ մը ուշ տպուի,
բայց ճիշդ ըլլայ: Գալով իմ գիտողութեանցս,
տհաւարիկ. — Երես 33, Բ. սխալակ — «Այ-
«մաղեան էֆէնտին Կատարութեան օրինաց
«դէմ մեղանշած լինելու յանցանօք դատա-
«պարտուած է » խօսքը սխալ է, ես այդպէս
չըսի, այլ թէ «Այմաղեան էֆէնտին օրինօք
«դատապարտուած է »: Նոյն երեսի վարի «բայց
«ամեն պարագայի մէջ պէտք է յուզել այս
«խնդիրը Ազգային Ժողովոյ մէջ, վասն զի ան-
«հատական է խնդիրն » — խօսքը պէտք է սր-
բագրուի սապէս. «բայց այս Ժողովն մէջ պէտք
«չէ յուզել այս խնդիրը որ կրնայ միաստեղ
«լինիլ »: Դարձեալ, երես 46, Ա. սխալակ —
«տաւեաղ սակայն ստիպում բանեցնելու » բա-
ռերը չեմ արտասանած բնաւ:

ՉԵՐԱԶ Մ. ԷՖ. — (Ա. Ատենադպիր) Այդ
գիտողութիւնները կարձանագրուին ամբող-

ջութեամբ. սակայն Դիւանն համամիտ չէ Պա-
րոնիկեան էֆէնտի այն կարծեաց թէ՝ ըսա-
ցոյն է տաւեաղութիւնն ուշ հասցնել, զի
անձիզ մասերն տաւեաղանից գիտողութիւն-
ներովը կրնան ուղղուիլ իսկոյն, եւ թէ ներկայ
տաւեաղութիւնն ուշ հրատարակուէր, հաւա-
նականաբար Պարոնիկեան էֆ. իսկ իւր պահ
մ'ատաջ ըրած սրագրութիւնները չպիտի կա-
րենար ընել, մոռցած լինելով իւր խօսքերն:
Մենք պիտի ջանամք իւրաքանչիւր նստի տա-
ւագրութիւնն յաջորդ նստին հասցնել անսրտ-
ճառ, կարելի եղած խնամքը տանելով հանդերձ
անոր խմբագրութեանն:

(Պարոնիկեան էֆէնտի կուզէ պատասխա-
նել Ատենադպիր էֆէնտի — Ատենադպետ է-
ֆէնտի խօսք չը տար, ըսելով թէ տաւեաղ-
ութեանց գիտողութեան պահուն, երեսփո-
խան մը միանգամ միայն կրնայ խօսք առնուլ):

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Երես 47. — Իմ
խօսքերուս մէկ մասը պակաս արձանագրուած
է: Ներքին կանոնագրի երրորդ յօդուածն կար-
դալով, անոր առաջին մասին գործադրութիւ-
նը պահանջած եմ Ատենադպետ էֆէնտին.
այս պահանջումս պէտք է որ անցնի տաւեա-
ղութեան մէջ: Այս առթիւ պիտի խնդրէի
Ժողովէդ որ այս աւել տաւեաղանից խօսքն
արձանագրող դիւանագրաց թիւն աւելնար,
որպէս զի տաւեաղութիւնը կարենան աւելի
ճիշդ խմբագրուիլ: Անցեալ տարի Ատենադա-
րութեան պաշտօնը վարած միջոցիս, փորձով
տեսայ թէ անհնար է որ երկու դիւանագրուիլը
կարենան կատարելապէս արձանագրել խօսքե-
րն: Ես ըսեմ գիտեմ որ իմ այս գիտողու-
թիւններս անգամ պակաս պիտի արձանագ-
րուի:

ՓԱՓԱՋԵԱՆ Տ. Յ. ՎՐԴՊ. — Երես 31, Ա.
Սխալակ. իմ խօսքերուս վերջը ստաբարեբու-
թիւնը գրուած է. «սակայն ընկանաբար

զայն յետաձգել հարկ կըլլայ » որ աւելորդ է:
Ես այսպիսի խօսք մը չարտատանեցի, վասն զի
անով վերը յայտնած կարծիքս ջնջած եւ հա-
կասութիւն գործած պիտի ըլլայի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Նախ, Ատենադպետ
էֆէնտի պահ մը առաջ ըսածները կըհաստա-
տեմ, և պարտք կ'ըղամ շնորհակալ ըլլալ Դի-
ւանէն որ այս երկու անգամ է, մէկ շաբաթ-
ուան միջոցին մէջ կարող եղաւ հասցնել տ-
աւեաղութիւններն:

Գալով իմ գիտողութեանցս, 36րդ երեսի
Ա. սխալակի մէջ ձայն բուր պիտի ըլլայ զոյն
և պիտի չնդունուի՝ պիտի ընդունուի. տը-
պագրական սխալներ են ասոնք: 34 երեսին
մէջ Ս. Պատրիարք Զօր սա խօսքն պակաս ար-
ձանագրուած է «Անոնց մէջ կան որք իրենց
«հմտութեամբ և տաղանդովը պատիւ կը բե-
«րեն այս Ժողովիս », ահա այս խօսքի պա-
տասխանելով ըսած եմ թէ. «Անոնց մէջ
մարդ ալ կայ որ այս Ժողովոյ շնորհին բարձ-
րացած է »: Երես 32, երբ Թիւրքաբեան է-
ֆէնտի տաւեաղեալ ընտրուելէ յետոյ, նոյն
երեսի մէջ արձանագրեալ խօսքերն արտասա-
նեց, ես ալ սա գիտողութիւնն ըրի, որ չէ
արձանագրուած, բայց կուզեմ որ արձանագ-
րուի. «Ազգային Ժողովս ցարդ իւր շարունա-
կութեամբ յաղթած է շատ արդեւներու,
իւր շարունակութեամբը պիտի յաղթէ ամե-
նուն »:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Տ. Կ. ՎՐԴՊ. — Ժողովոյս
Բ. նստին ներկայ էի ես, բայց կերեւի թէ սը-
խարմամբ բացակայ նշանակուած եմ տաւեաղ-
ութեան մէջ, ուստի կը խնդրեմ որ այս սը-
խան ուղղուի:

ՉԵՐԱԶ Մ. ԷՖ. — (Ա. Ատենադպիր) Չեր-
և Փափաջեան էֆէնտի գիտողութիւններն ալ

կործանագրութիւն ըստ օրինի : Կը տեսնէ՞ք թէ ընդհանրապէս եղած դիտողութիւնք տղաք-րական սխալներու վրայ են : Փորձերն աչքէ անցնելով թէեւ այդ սխալներն սրբագրած եմ, սակայն կը ցաւիմ որ անիտիտի թողութեան գրաշարաց անուշադրութեամբ :

ՓԱՓԱՋԵԱՆ Մ. ԷՖ. — Միշտ ներողամիտ ըլլալու եմք այսպիսի սխալանալ, վասն զի ամեն դործ հետզհետէ կը կատարելագործուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ես ալ իբր Երեսօրհան, կուզեմ իմ դիտողութիւններս ընել : Յունիս Յի նստի մէջ, Այվազեան էֆէնտի խնդրոյն առ թիւ Մամիկոնեան էֆէնտի պատասխանելով զարմանք յայտնեցի թէ « Ինչպէս անհոտաւ » կան կը նկատուի դատ մը որ ըստ ամենայնի « ազգային է, շորթաթիթն ալ, պարագայներն « ալ, վերջապէս ամեն ինչ : » Իմ այս պատասխանիս դոյնը փոխուած կը տեսնեմ այժմ եւ սխալ արձանագրուած : Այս պարագային վրայ Դիւանադարի էֆէնտիներու ուշադրութիւնը կը հրաւիրեմ. կրնայ ըլլալ որ խօսք մը պակաս արձանագրուած ըլլայ, սակայն ներքի չէ խօսից խնամտն այլայլել : Բայց ինչպէս ըստ արդէն Սուրէնեան էֆէնտի, անհրաժեշտ է յառելով դիւանադարացի թիւն, զի երկու դիւանադարիք որքան ալ որ յաջողակ եղած ըլլան, չեն կարող այսքան բաղմունքեան խօսքերն կատարելապէս նշանակել և այն առանց սղադրութեան, մանաւանդ ազմկալից նիստերու մէջ :

Ուրիշ դիտողութիւն ընող չլինելով Ատենապետ էֆէնտի բուէի կը դնէ Բ. նստի տառնադրութիւնն զոր ժողովն ԿԸՆԴԻՆԻ և ԿԸՎԱԻՆԻԷ եղած դիտողութեամբ հանդերձ :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա.

Ընտրութիւն Նախարարացի դիւանաց

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենական գործողութիւնք աւարտած լինելով, այժմ կանցնիմք մեր Օրակարգի առաջին խնդրոյն, այն է Նախարարն զիւանաց ընտրութեան, զոր պէտք է կատարել որպէս զի Դիւանիս ներկայացեալ առաջարկներու յղումներն կարենանք ըստ այնորմ ընել :

Ինչպէս սովորութիւն է, Տեսաք, Դիւանս Նախապէս ընտրելեաց սրբազանի ցանկ մը պատրաստած լինելով բաշխած է երեսօրհանայ ի դիւրութիւն քուէարկութեան, ասով հանդերձ մէն մի երեսօրհան ազատ է նոյն ցանկէն զուրս ուղած երեսօրհանին տալ իւր քուէն : Սակայն այս գործողութեան ձեռնարկելէ առաջ պիտի խնդրեմ Մեկիքեան էֆէնտիէ որ յարգելով ժողովոյ կամքը անցնի իւր Բ. Ատենադարի աթոռը :

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Խօսք կուզեմ Ատենապետ էֆէնտի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Առ Մեկիքեան էֆէնտի) Դիտեմ որ հրաժարականի խնդիր պիտի յարուցանէք, ուստի խօսք չեմ կրնար տալ Ձեզ, արդէն գրով ալ հրաժարական տուած էք, սակայն Ձեր գիրն ալ չպիտի ընթերցուի յատենի ժողովոյ : Ուստի և կը խնդրեմ յանուն ժողովոյ որ ընդունիք Ձեզ յանձնուած պաշտօնն առանց դժուարութեան :

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Սակայն Ատենապետ էֆէնտի, զբաղումներս շատ են, և որ առաւել է, աճյալիս պատճառներ ունիմ որք չեն ներքի ինձ ընդունել այս պաշտօնը :

(Յամենուս ժողովականք կատարեն զՄե. լիքեան էֆ. ընդունիլ Բ. Ատենադարի պաշտօնն և անցնիլ յիւր աթոռ :)

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Որպէս զի ժողովոյ գործոցն արդէն չլինիմ, այսօրուան համար միայն կընդունիմ վարել Բ. Ատենադարի պաշտօնն : (Չոյս ասելով Մեկիքեան էֆէնտի կանցնի Բ. Ատենադարի աթոռն) :

Ատենապետ էֆէնտի հրաւիրելով զերեսօրհանս Նախարարն զիւանաց ընտրութեանն համար իրենց քուէներն պատրաստել, տասն փոյրկերի համար կընդհատէ զԱտենան, և ապա վերստին բանալով դոյն, քուէհամարի բնիչ կը կարգէ վիճակաւ :

Ղաղար էֆէնտի	Հովսէան
Մատթէոս	Ալիքսանեան
Տիգրան	Հիւնքեարպէյեանեան
Ռէթէոս	Թադէոսեան

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Մայր-Դիւանի կողմանէ բաշխուած ընտրելեաց ցանկին մէջ Դատարարակութեան դիւանի ընտրելի առաջարկուած են երեք անձինք որք միանգամայն Ուսումնական խորհրդոյ անդամ են : Ես կը կարծեմ թէ ներքի չէ քուէ տալ անոնց, վասն զի մի և նոյն անձինք չեն կրնար համարաւոր և միանգամայն համարաւոր ըլլալ :

ՋԱՅՆԵՐ — Ներելի է, ներելի :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍԿ. — Կրթութեան ընդհանուր օրինաց խնդիրը ոչ թէ դատարարակութեան Դիւանին կերթայ, այլ ներքին կանոնադրի համաձայն՝ Ատենապետաց Դիւանին, ուստի իրաւացի չէ Պէրպերեան էֆէնտիի բիչ մը տուալ ըրած դիտողութիւնը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Պէրպերեան էֆէնտիի դիտողութիւնն շատ իրաւացի պիտի ըլլար, եթէ պաշտօնէական դրութիւնն տալու արդէն այս միջոցաւ : Բայց քանի որ այժմ Սահմանադրական դրութեամբ կընթառամք, բնաւ ո և է անտեղութիւն մը չը ծագիր, զի Կրթական և այլ միւս Տեսուչ խորհուրդք, ուղղակի Քաղաքական Ժողովոյ պատասխանատու են, և Քաղաքական Ժողովն ևս Ազգային Ժողովոյ :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Պէրպերեան էֆէնտիի դիտողութիւնը շատ իրաւացի կը գրեւորեմ, որովհետեւ ամեն կրթական խնդիր որ Ուսումնական խորհուրդէն կը բղխի և Վարչութեան միջոցաւ Ժողովոյ կը ներկայանայ, կը յղուի Դատարարակութեան դիւանին, հետեւաբար, ինչպէս բնաւ Պէրպերեան էֆէնտի, մի և նոյն անձինք թէ համարաւոր պիտի ըլլան և թէ համարաւոր :

Ասկից դատ, կը տեսնեմ որ Նախաձեռնութեան Դիւանի ընտրելեաց մէջ իմ անունն ալ դրուած է : Կը յայտարարեմ որ չեմ կրնար անդամակցիլ անոր, և չեմ ընդունիր պաշտօն Նախարարն զիւանաց մէջ : Եթէ կան այնպիսիք որք ինձ պէս պիտի չկրնան սրտածն ընդունիլ, լուազոյն է որ կանխաւ իմացնեն, որպէս զի ընտրութիւններէն վերջը հրաժարականներու խնդիր չի ծագի և Ժողովն առնոյմով ժամովաճառ չըլլայ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Սուրէնեան էֆէնտին տակաւին ընտրուած չէ, ուստի չը կրնար այժմէն հրաժարիլ :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Աւելի լաւ է կանխաւ յայտարարել քան թէ ընտրուելէ յետոյ հրաժարիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սուրէնեան էֆէնտի օրինաց չը նախատեսուած մէկ կէտն յոռաձի կը բերէ. օրէնքը չըսեր թէ փափար յայտնող

անձինք ընտրելի կը նշանակուին, իսկ ուզողը իւր անունը մէջէն տարել կուտայ, այլ Դիւանն է որ կը պատրաստէ այդ ցանկը ամենայն տղատութեամբ:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Ես պարզապէս իմ կործիրս յայտնեցի:

Այն միջադէպէն յետոյ, ժողովն Դիւանին ներկայացուցած սրբազրեկի ցանկին վրայ բուէ-արկութիւն կատարելով, բուէհամարի արդիւնքը կը յայտնէ թէ՛ Նախարարնիչ Դիւաններն կողմուած են հետեւեալ կերպով:

(Թիւ բուէարկուող 48)

Ձեռնամուրեան Դիւան

1. Մատթէոս Եպիսկ. Իզմիրլեան
2. Յովհաննէս Քաչ. Մկրեան
3. Մարկոս Էֆ. Աղաբէգեան

Դատարարակութեան Դիւան

1. Մինաս Էֆ. Չերազ
2. Յակոբ » Գուրգէն
3. Ռեթէոս » Պէրպէրեան

Կայուածոց Դիւան

1. Յակոբ Էֆ. Եէմէնիճեան
2. Յակոբ » Հաճեան
3. Քրիստոստուր » Ղազարոսեան

Համարակալութեան Դիւան

1. Մատթէոս Էֆ. Ալիքսանեան
2. Յակոբ » Պարոնեան
3. Պօղոս » Թորգոմեան

Յարաբերութեան Դիւան

1. Ղազար Էֆ. Հովուեան
2. Յովհաննէս » Թորոսեան
3. Տօքթ. Վ. » Օրմանեան

Իրաւասութեան Դիւան

1. Դարեգին Վարդ. Թաթարեան
2. Կարապետ » Բաղրատունի
3. Մկրտիչ Էֆ. Մէղպուրեան

Նախաձեռնութեան Դիւան

1. Աւետիս Էֆ. Սուրէնեան
2. Կարապետ » Իւթիւճեան
3. Յակոբ » Արշակ

Խմբագրութեան Դիւան

1. Եղիա Էֆ. Տէմիրճիպաշեան
2. Մկրտիչ » Մէլիքեան
3. Համբարձում » Ալաճաճեան

(Այն բուէարկութեան մէջ ձեռնադրւած կը թուի Կարապետ Էֆէնտի Փանոսեան:)

Ատենապետ Էֆէնտի ժողովին կը հաղորդէ այն ընտրելեաց ցանկն և Նախարարնիչ զիւանաց անդամ իւր ՀՈՉԱԿԷ անոր մէջ նշանակեալ 24 անձներն:

Սուրէնեան Ա. Էֆէնտի վերստին յայտարարելով թէ ինք չը կրնար ընդունիլ Նախաձեռնութեան Դիւանի անդամակցութիւնն, յատկապէս կը խնդրէ որ իւր այս յայտարարութիւնն արձանագրուի:

Նոյնպէս Տ. Յովհաննէս Քաչանոյ Մկրեան կը յայտնէ թէ իւր զրազումներն չեն ներեր իրեն ընդունիլ Ձեռնհասութեան Դիւանի անդամակցութիւնը:

Դիւանը կը խնդրէ Սուրէնեան Էֆէնտիէն և Տ. Մկրեանէն ընդունիլ իրենց յանձնուած պաշտօններն և հրաժարականի խնդիր չը յարուցանել:

Ընտրութիւն Ելեւմտից Յանձնախմբի Ազգային ժողովոյ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ պիտի ձեռնարկեմք Ազգային ժողովոյ Ելեւմտից Յանձնախմբի ընտրութեանն: Այն ընտրութեան համար զազունի բուէարկութեան հարկ չկայ, կրնամք ձեռնարարձով կատարել ընտրութիւնն: Ի զիւրութիւն բուէարկութեան Դիւանն ընտրելեաց սրբազրեկի ցանկ մը պատրաստած է որ ահաւասիկ,

Գէորգ Էֆէնտի Ասլեանեան
Միհրան » Չօլանեան
Պօղոս » Էրսէրճեան
Քրիստոստուր » Ղազարոսեան

ՁՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Կը խնդրեմ որ անուն ընկէր այդ ցանկէն և ապա բուէարկութիւն կատարէք, վասն զի անկարելի է ինձ ընդունիլ այլ եւս այդ պաշտօնը:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Իմ մասին ալ ճիշդ այդպէս է, բայց ժողովն նախ պիտի որ ընտրէ և ապա կրնամք հրաժարիլ:

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Ամեն անգամ որ Ելեւմտից Յանձնախմբը կը կարգուի, ժողովոյ Ա. Ատենապետը կանգամակցի անոր ըստ օրինի, վասն զի այնպիսի պարագաներ կան, մանաւանդ ատենադրութեանց մասին, որք անհրաժեշտ կընեն նորա անդամակցութիւնն: Այդ քանի որ Չօլանեան Էֆէնտի կը հրաժարի, հարկ է որ Չերազ Էֆէնտի անգամ ընտրուի:

(Յամենուստ ժողովականը հատնութիւն կը յայտնեն Մեկիքեան Էֆէնտիի այն տալիս ջարկութեան:)

ՁԵՐԱԶ Մ. ԷՖ. — Ըստեցաւ թէ ըստ օրինի պարտաւոր եմ անդամակցիլ Ելեւմտից Յանձնախմբին, սակայն մեր ներքին կանոնադրի մէջ այդպիսի արամադրութիւն չի կայ ընտրութեան: Ձեմ կարող ընդունիլ այդ պաշտօնն, մանաւանդ որ Մայր-Ելեւմտի անդամներն մին, Ք. Ղազարոսեան Էֆէնտի, ընտրուելով՝ ատենապետի ներկայութիւնն կրնայ աւելորդ լինիլ այլ եւս: Եթէ ժողովը ուզէ պարտաւորել համարիլ ինձ համար իսկ Մասնախմբի անդամակցութիւնը, պիտի ապիպուիմ հրաժարիլ ներկայ պաշտօնէս, դժկամակութեան զգալով անդամակցիլ զրամական գործերով զրազու Մասնախմբի մը:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Թէեւ ներքին կանոնագրի մէջ այդպիսի արամադրութիւն մը չը կայ, սակայն ամբարձիւնը կանոնի տեղ անցած է եւ Ա. Ատենապետը բնական օրինոր պարտաւոր է անդամակցիլ Ելեւմտից Յանձնախմբին, վասն զի, ինչպէս փորձով ալ պիտի տեսնէ, այնպիսի պարագայներ պիտի ներկայանան որ իւր գործակցութիւնն անհրաժեշտ լինի:

ՁԵՐԱԶ Մ. ԷՖ. — Մինչ պաշտօնիս զըրաւան մասը միայն դժաւորացիլ կերպով կատարելու հաղիւ պիտի բաւէ ժամանակս, չեմ կարող ժամանակ գտնել նիւթական հոգեւոր ալ պարտաւորեալ և ատենադրութեանց խմբագրութեանն աշխատելէ յետոյ անոնց տալիս գրութեան ծախուց համար ալ աշխատելու: Տնտեսական Խորհրդոյ գաւոր գեղերելով օրերով: Եթէ Ելեւմտից Յանձնախմբի անգամ ընտրուիմ իսկ, չը պիտի կարենամ փոխել ուրիշ մաս և աշխատակցիլ իրեն:

(Այն պահուն ժողովականը ամեն կողմէ քուէ կը խնդրեն, — Ք. Ղազարոսեան Էֆէնտի խօսք կուզէ: Պահ էր չփոխութիւն կը ծագի, զոր Ատենապետ Էֆէնտին կը յաջովի հանգարտեցնէ:)

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Ք. ԷՅ. — Երբ այս ժողովն մեզի գործ մը կը յանձնէ, մենք իբր. Սահմանադրական անդամներ որոտաւոր եմք հրնազանդել և ընդունիլ: Սակայն երբ այդ պաշտօնը վեր է մեր կարողութեանէն, և կողմեր թէ չը պիտի կարենամք պէտք եղածին պէս ի գըլտիս հանել զայն, բնականաբար կը հրաժարիմք: Աս սցարան տեսնէ ի վեր Երեսմայից Յանձնախորհրդի անդամ եղած եմ, և փորձով զիտեմ թէ որքո՞նք դժուարութիւններ կան մեր պաշտօնի կատարման մասին, զրո՞ւմ չը վճարուիր կանոնադրապէս և մեր խօսքն ազգայնութիւն չունի Պատրիարքարանի յետին պաշտօնէին վրայ անդամ: Աւտի եթէ այս որդեկները չը վերնան բան մ'ալ չը պիտի կարենամք ընել և նոյնպէս պիտի հրաժարին ամեն անոնք, որք կոչուին այս պաշտօնին: Ազգային ժողովը ամեն բանէ առաջ, որտաի գրաման կան մասը նկատադրութեան տանալ, այս գըլտաբարութեանց դարման տանելու համար:

Տ. Մ. ԵՊԻՍԿ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ղազարսեան էֆէնտի, դուք իբր. հնազանդ երեսմայիս և իբր. փորձառու անդամ Երեսմայից Յանձնախորհրդի, կրնաք դարման մը խորհիլ և այս մասին ծրագիր մը բերել ժողովոյս:

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Ք. ԷՅ. — Պահանջուած ծրագիրը պատրաստելու մասին դժուարութիւն չկայ մեզ համար:

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — Դարմանը մէկ է: Բնականաբար երբ կեդրոնական անտակի հաշուեցոյցն ներկայանայ ժողովոյս, յորում նըլանակեալ պիտի ըլլայ ի հաշիւ Ազգային ժողովը վճարելի գումարն, կրնամք խորհիլ այդ գումարին վճարումը փութացնելու միջոցն բուն վրայ:

Սոյն փնտրանութեան յետոյ, Ատենապետ էֆէնտի Դիւանին կողմանէ ներկայա-

յուցած Երեսմայից Յանձնախորհրդի ընտրեալաց ցանկէն՝ ըստ խնդրանայ Չոպանեան Միհրան էֆէնտի, անոր անունն գուրս կը ձգէ և նորա տեղ նշանակելով Չերազ Միհրան էֆէնտին, ժողովոյ քուէին կենթարկէ զայն:

Չերազը քուէարկութիւն կատարուելով, ժողովն միտնայն հաւանութեամբ ԿԸՆԴՈՒՆԻ և կը ՎԱԿԵՐԷ յիշեալ ցանկն: Հետեւաբար Ատենապետ էֆէնտի Ազգային ժողովոյ Երեսմայից Յանձնախորհրդի անդամ կը ՀԱԶԱԿԷ:

Քրիստոստոսը	էֆէնտի	Ղազարսեան
Միհրան	»	Չերազ
Պօղոս	»	Էրսէրճեան
Գէորգ	»	Ասրանեան

Առաջարկութիւն Տ. Մ. Եպիսկոպոսի Իզմիրլեան ի մասին տպագրութեան 1860—70ի Ազգային ժողովոյ Ատենադրութեանց

Տ. Մ. ԵՊԻՍԿ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ազգային ժողովոյ Երեսմայից Յանձնախորհրդի մեր տառնադրութեանց տեսուչն է և այդ Յանձնախորհրդի կը պատկանի տառնադրութեանց տպագրութեան հոգը: 1870 էն ի վեր Ազգային ժողովն ունի իւր տպեալ տառնադրութիւններն որք Սահմանադրութեան պատմութիւնն են, տակայն Ազգը 23 տարուան Սահմանադրական Ազգ մ'է և Սահմանադրութեան պատմութիւնը 70 էն չ'սկսեր, այլ 1870 էն, ուրեմն տառնադրութեան պատմութիւն մը կայ որ անտիպ կը մնայ Պատրիարքարանի գիւանատանը մէջ: Ներկայ չըլանիս մէջ երկու կենտական խընդիրներ ունիմք մեր առջն, այն է՝ Էջմիածնայ Կաթողիկոսական խնդիրը և Երուսաղիմայ պարտուց բարձման խնդիրը, որոց եր-

կուրին համար ևս պէտք պիտի տեսնամք զի մեզ անտիպ տառնադրութեանց, յորս պիտի տեսնեմք թէ ի՞նչ հզօր կերպիս փնտրանաւ ևն այս երկու կարեւոր խնդիրներն և ըստ պիտի ստանամք անանցմէ: Աւտի կառաջարկեմ որ Ազգային ժողովն յանձնարարէ իւր Երեսմայից Յանձնախորհրդին 1860 էն ի վեր անտիպ մնացած տառնադրութիւններն հաւաքելով, տպագրել, և այս ծախսոց համար՝ որ այնքան մեծ գումարիւր չեն կարողիր, մասնաւոր գումար մը յատկացնել մեր այս տարուան Երեսմայոցին մէջ: Այս կերպով թէ՛ Ազգային ժողովոյ տառնադրութիւնն ամբողջացուցած պիտի ըլլամք և թէ՛ յիշեալ երկու կենտական խնդրոց մասին զիտակցութեամբ պիտի գործեմք, միանգամայն ըստ մը գոյթակցութիւն տառնադրութեանց վերջ տալով:

ԶԱՅՆԵՐ. — Շատ օրինաւոր է, կը կրկնեմք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Դիւանս կը խնդրէ Տէր Մատթէոս Սրբազանէն որ իւր այս առաջարկն զրաւոր կերպով ներկայացնէ ըստ օրինի:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՅ. — Կրնամք անմիջապէս նախադրել ընդունիլ Մատթէոս Սրբազանի առաջարկն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Նախադրեալ կըրնամք մերժել, րոպց ոչ ընդունիլ անմիջապէս:

Հետեւաբար ըստ պահանջման Դիւանի, Տէր Մատթէոս Եպիս. Իզմիրլեան 1860—70ի տառնադրութեանց տպագրութեան առթիւ իւր առաջարկն ի գիր տաւ, կը յանձնէ զայն Դիւանին:

Կառաջարկեմ որ Ազգ. ժողովոյ 1860 թուականէն մինչ 1870 օգոստ. ամսոյ 24 ունեցած նիստերու տառնադրութիւնն, որ ցարգ անտիպ կը մնան, տպագրուի: Սոյն տպագրութեան գործն Ազգ. ժողովոյ Երեսմայից Յանձնախորհրդին յանձնուի:

Ազգ. Երեսմայի
Մ. Եպիսկ. Իզմիրլեան

ԶԱՅՆԵՐ — Կը կրկնեմք:

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — Իզմիրլեան Սրբազանի առաջարկութեան առթիւ ևս ալ ըստ սկիզբ ունիմք: Ատենադրութեանց տպագրութիւնն երկու տեսակ օգտակարութիւն կընծայէ: Ա. Երեսմայի տառնադրութիւնն իւրաքանչիւրին իւրաքանչիւր կարծիքները կարճաճառագրէ, որով տպագրային մէջ ըստ կրնայ տեսնել փնտրանելի խնդրոց վրայ, և Բ. ժողովուրդն երեսմայի տառնադրութեան կը վարժեցնէ, և միանգամայն բարոյական տեսակետով ևս Պատ. Վարչութիւնը տեղեակ կըլլան Ազգային ժողովոյ գործոց և ընթացից: Աւտի փոփոխելի է որ, ինչպէս ասկից յառաջ տալարութիւն էր, այսուհետեւ ևս Ատենադրութիւնը ի վաճառ գըլտին Պօղոս Եկեղեցեաց բանկալներն, զրաւաճառաց քով, և թէ՛ դաւառներն զրկուին, անոնց ընթերցումը ծառայելու համար, որպէս զի դաւառացիք ալ գիտնան թէ իրենց ընտրած երեսմայի անդամներն ի՞նչ կը խօսին և ի՞նչ կը գործեն: Ես կը կարծեմ թէ ասկից լուսազոյն միջոց մը չը կայ ժողովուրդը Սահմանադրական կեանքի վարժեցնելու համար, և կը խնդրեմ որ իմ առաջարկս կցուի Իզմիրլեան Սրբազան Հօր առաջարկին:

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Ք. ԷՅ. — Այդ մասին կարծեմք որ որոշում տալու հարկ չը կայ, փոքր զի արդէն իւրաքանչիւր տառնադրութեան 600 հատ կը տարւէր Պատանները ցրուելու համար և այս գործադրուեցու 70էն սկսեալ մինչեւ 75

թուականը և որովհետև բառական դասարանը կը գոյանար և հետզհետե գոյանալու վրայ էր : Բայց ի վերջոյ դադարեցաւ այս ստորաթիւնը , և որոյ որ կը վերաբերէր այս ստորաթիւնը չը շարունակեցին յղել : Սակայն երբ ասկէ 3-4 տարի առաջ ստաջին անդամ լինելով Ալեւմտից Յանձնախմբին բնարութիւն կատարուեցաւ , մեր եւս իբր նոյն Յանձնախմբին անդամ մեր ստաջանակցաց հետ յատկապէս ի Պատրիարքարան իջնելով ատենագրութեանց ցուցակը դասար և ուղեցին որ նորէն գրկուին անոնք , ոչ թէ անոնց փաճառումէն շահ մը տրտաղրելու , այլ Ազգային ժողովոյ որոշումներն գործադրելու համար : ասկայն այն ատենուան Տնտեսական խորհրդական Մելիքեան Քարեղին էֆէնտի ըսաւ թէ՝ «Դուք Յանձնախմբին էք և միայն ժողովոյ ծախուց կրնաք միջամտել և ոչ թէ անոր մատրքը դանձելու , զի ասի Տնտեսական Տեսչութեան իրաւասութեան կը պատկանի » : Թէեւ յիշեալ խորհրդականն իրաւունք չունէր այսպիսի մի առարկութիւն ընելու , զի մեք ոչ թէ Ալիւ , այլ մտից յանձնախմբին էինք : Այսպիսի դժուարութիւններ տեսնելով մենք եւս ետ կեցանք մեր առաջարկութենէն , բայց համարում եմ որ եւ թէ ատենագրութիւն գրկուած փութերուն և գաւառներուն երեքին մէկը անոր զինը զրկէ , ատենագրութեանց ծախուց մեծ օգուտ մ'ընծայած կրկամք և Աղբրանական անտակն ալ մնասաւ չենթարկուիր :

(Ղազար էֆէ. Հոփեան և Մելիքեան Մ. էֆէնտի կը հաստատեն Ղազարեան էֆէնտի այն յայտարարութիւնը :

ԶԵՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Մատթէոս Սըրբազանի առաջարկութիւնը եւ ալ կրնաւ ըլլալ , բայց որովհետեւ անցեալ ատենագրութեանց մէջ կան ինչ ինչ մասեր որք չեն կրնար ի ըստ դաւ : Ըստ իս լուսաւորչն է որ Մայր-Պիտան միանայ Ալեւմտից Յանձնախմբին հետ , այդ

ատենագրութիւններն անդամ մը ոչրէ անցնելու և ըստ այնմ տարելու համար :

ԶԵՐԱԶ Մ. ԷՖ. — (Խր Ա. Ասեմաղալի արտաք լուրով) Անտիպ ատենագրութիւններն Ալեւմտից Յանձնախմբին յանձնելով ի տարաբարութիւն , անդրոյն նիւթական մասը կարգադրած կը լինին : Քաղով բարոյական մասին , որ պատմական ատենագրութիւնն երեւան հանելու մէջ կը կայանայ , հին երեսփոխաններէ՝ դանդաղաներ ըսած եմ ըստ անդամ թէ իրենց խօսքերն աղաւաղեալ կամ խեղաթիւրեալ արձանագրուած են ձեռագիր ատենագրութեանց մէջ , այն ժամանակի Արքայութեան տեսութեանց համեմատ : Հետեւապէս կատարելով որ Ալեւմտից Յանձնախմբին գործին նիւթական մասին չը ձեռնարկած , այդ ատենագրութիւնները կամ Խմբագրութեան Պիտանն և կամ մանուանդ երկրագոյն երեսփոխաններէ Մանախումր մ'ընտրելով այդ Մանախումրին յղուին , որպէս զի հարկ եղած կէտերն հին ատենագրութիւնն և անոնց ժամանակակից երեսփոխաններէն ճշգրտով տարաբարին : Քաղով Զօրանեան էֆէնտի այն առաջարկութեան թէ Մայր-Պիտանն ընկերակցելու է Ալեւմտից Յանձնախմբին , համարիս չեմ իրեն , զի արդի Պիտանը բոլորովն անտեղեակ է 1860 էն 70) Ազգային ժողովոյ մէջ սեղի ունեցած վիճարանութեանց :

Յ. Մ. ՆՊԵՍԿ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Սուրենեան էֆէնտի իւր առաջարկութիւնն ըրած ատեն , մտքէս չէր անցնէր որ Ազգային ժողովոյ նախորդ որոշումը դժբաղութենէ դադրած էր : Քաղով հին ատենագրութեանց մասին Զերազ էֆէնտի առաջարկութեան , չեմ կրնար ընդունիլ զայն , զի գիտեմք թէ անոնց ի բարանչիւրի ձեռագիրն յաջորդ նրաւին մէջ կարգադրուելով , եղած գիտադրութիւնները լուսել յետոյ , կը փախերանար , և Ատենագրեալ և Ատենագրուիր կատարադրէին :

ԶԵՐԱԶ Մ. ԷՖ. — (Ընդմիջելով) Ալաւերացումը պատմական ատենագրութեան համար բառական չէ միշտ :

Յ. Մ. ՆՊԵՍԿ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — (Շարունակելով) Ես այն կարծիքէն եմ որ բառ մը անգամ չ'փոխուիր այդ հին ատենագրութեանց մէջ և ամէն ինչ նոյնութեամբ պահուի իբր պատմական յիշատակարան մը , որմէ ազգը պիտի կարենայ նաեւ դատել թէ իւր կենդանի լեզուն ինչ փոփոխութիւններ կրած է այդ թուականէ ի վեր :

Զօրանեան էֆէնտի գիտել տուաւ թէ անտիպ ատենագրութեանց մէջ այնպիսի մասեր կան որք չեն կրնար հրատարակուիլ : Այս գիտադրութիւնը եւս սխալ է , հին ատենագրութիւնը մնասակար բառ մ'իսկ չեն պարունակեր , և ընդհանրապէս այն ժամանակ թէ և ժողովոյ նիստերն դանդաղ , ուսկայն երեսփոխանը աւելի շրջահացեցութեամբ և աւելի զգուշութեամբ կը խօսէին : Ես իբր իմ առաջարկութեան տէր , չեմ ուզեր որ ու է փոփոխութիւն կրէ այն , այլ նոյնութեամբ լուսելի դրուի :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կը կրկնեմ Մատթէոս Սըրբազանի խօսքերը , փասն զի անտիպ ատենագրութիւններն եւս ևս կարգացած եմ ծայրէ ի ծայր և բնաւ մնասակար բան մը չեմ նշմարած անոնց մէջ :

ՊԱՐՈՆԻԿԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ այն կարծիքն պիտի յայտնէի զոր յայտնեց Իզմիրլեան Սըրբազան , ուստի հարկ չեմ տեսներ կրկնելու :

ԶԱՅՆԵՐ. — Քուէ , քուէ :

Ատենագրեալ էֆէնտի , ըստ որոշման ժողովոյ , այս խնդրոյս վրայ վիճարանութիւնն փակեալ յայտարարելով , բուէի կը դնէ Տէր

Մատթէոս Աղիակոյտի առաջարկութիւնն որ 1 քուէի գէժ ԿԸՆԴՈՒՆՈՒԻ միաձայնութեամբ :

Հետեւաբար ժողովն ԿՈՐՈՇԷ Ազգային ժողովոյ 1860 թուականէն մինչ 1870 օգոստոս ամսոյ 24 ունեցած նիստերու անտիպ ատենագրութիւններն նոյնութեամբ տարադրելու իւր Ալեւմտից Յանձնախմբին ձեռամբ :

Հարցադիրք երեսփոխան Աւետիս ԷՖ. ԹՆԿԻԿԵԱՆԻ

Ատենագրեալ էֆէնտի յայտնելով թէ Ազգ. երեսփոխան Թնկիկեան Աւետիս էֆէնտի կողմանէ մի քանի հարցադիրք կան սեղանին վրայ , կը հրաւիրէ զԱտենագրուիր էֆէնտի ընթեռնուլ զայն :

Մեծապատիւ Ատենագրեալ էֆէնտի Ազգային երեսփոխանական ժողովոյ

22րդ շրջանի Ազգ. ժողովոյ վերջին նստին մէջ Շատախու խնդրոյն վրայ , ի պատասխանի մեր Վարչութեան տեղեկագրոյն , Սըրբազան Պատրիարք Հայրն բացատրեց թէ՝ « Շատախոյ վիճակին համեմատ պէտք եղած խնամք կը տարուի » . ինչպէս Պատ. ժողով նոյնպէս և մենք որ դձեւ եղանք նոյն բացատրութենէն , սակայն մինչ ցարգ ալ չտեղեկացանք թէ նոյն վիճակ ընտելեցաւ և իրենց վիճակին համեմատ պէտք եղած դարձան տարուեցաւ :

Կը խնդրեմ Ազգ. Վարչութենէն որ այս մասին եղած անօրինութեանց դժ. հացուցիչ տեղեկութիւնն տայ և բարձուի այս խնդիրն Ազգ. ժողովոյ սեղանէն :

Ազգ. երեսփոխան
Աւետիս ԹՆԿԻԿԵԱՆ

1883 Յունիս 10 Կ. Պոլիս

Մեծապատիւ Տէր Ատենապետ
Ազգ. Ժողովոյ

Թէպէտե մասնաւոր տեղերէ կը լը-
սեմք թէ, Վանայ հարաւային շրջակայ
գաւառներէն մաս մաս գաղթականու-
թիւններ տեղի կունենայ օրերս, սակայն
ոչ սուտ, և ոչ որ աստիճան ստոյգ ըլ-
լան գիտեմք:

Եթէ Ազգ. Վարչութիւնը Վանայ Ա-
ռաջնորդարանէն պաշտօնական տեղե-
կութիւն մ'ունի այս մասին, կը խնդ-
րեմք որ բացատրութիւն մը տայ Պատ.
Ժողովոյս ի միամտութիւն տատ պան-
դուխտ անաւայելոյ:

Որովհետեւ յայտնի ճշմարտութիւն
մ'է, գործն' թէ իւր իրականութիւն ու-
նի, երկրին մնաս է, և Բարեխնամ Կա-
ռավարութեան շահուց ալ անհամաձայն:

Ազգ. Երեսփոխան
Աւետիս Թնկեր

10 Յունիս 1883

Կ. Պօլիս

Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտի
Ազգ. Պատկառելի Ժողովոյ

Երուսաղիմայ պարտուց բարձման
մասին, արդէն գիտեմք որ, Ազգ. գոր-
ծադիր իշխանութիւնը բանակցութեան
մտած է Բ. Դրան հետ, սակայն մինչե-
ցարդ որ բաւական օրեր անցան, Ազգ.ը
տեղեկութիւն մը չաւառ:

Այս կարեւոր և կենսական խնդրոյ
վրայ մի լուր կը խնդրեմք Պատ. Վարչու-
թեանէն, ոչ թէ որպիսի եղանակ և ման-
րամասնութիւն գիտնալ, այլ կը փափա-
քեմք իմանալ թէ բանակցութիւնները

որ աստիճան յաջող և յուսալի վիճակի
մը հասեր են յօդուտ հայ ազգին:

Եւ որովհետեւ քանի որ այս պարտք
հայ ազգին է և որչափ ալ որ երկարի,
այնքան ևս ծանրութիւն մը կը լինի հայ
սերնդեան, Ազգ. Ժողովոյ խորին ուշա-
գրութիւնը կը հրաւիրեմ, և գիտեմք որ
Երուսաղիմայ Ամեն. Եպոյի Սրբազան ալ
յատուկ այս խնդրոյն համար Կ. Պօլիս
գիմեց և երբ բազում աշխատութեանէն
փորձ ցցուց թէ այս գումար հայ հան-
րութեանէն պիտի կարենայ առնուլ կըտ-
րուկ միջոցաւ մը, յայնժամ Ն. Սրբազ-
նութիւնը լուեց ու համբերելով արդեանց
կ'սպասէ:

Ազգ. պէտք է ժողովը Ն. Սրբազ-
նութեան վիճակն ալ նկատողութեան
առնու, զի գրեթէ 13—14 ամիս է որ
իւր Պատրիարքական պաշտօնէն հեռա-
ցեր է:

Ազգ. Երեսփոխան
Աւետիս Թնկեր

1883 Յունիս 10

Կ. Պօլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը տեսնէք,
այն հարցումներն վիճարանութեան նիւթ չեն
օրապահներ Ժողովոյս համար և հարկ է ըստ
օրինի յղել զանոնք Վարչութեան ի պատա-
խանատուութիւն:

Ըստ յայտարարութեան Ատենապետ Է-
ֆէնտի, Ժողովն միաձայնութեամբ ԿՈՐՈՇԷ
այն երեք հարցումներն յղել Վարչութեան,
պատասխանն մինչեւ յաջորդ նիստ Ժողովոյ
ներկայեւ օրոշմամբ:

Գիտողացիր Արքանամ Էֆ. Այվազեանի ի
վերայ ԺՁ. Տատի Ատենագրութեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այվազեան Արքանամ
Էֆէնտին անցեալ նստաշրջանի ԺՁ. ատենա-
գրութեան վրայ իւր գիտողութիւններ զրկած
է մեզ գրով, եթէ Ժողովը կը կամի, կ'անց-
նեմք զայն ատենագրութեան մէջ, վասն զի
այդ թուականին Այվազեան Էֆէնտի տակա-
րին երեսփոխան էր:

20 ՊԱՆԵՍԱՆ Մ. ԷՖ. — ԺՁ. նստի ատե-
նագրութիւնն վաւերացուցած եմք արդէն, և
զիտեմք թէ վաւերացեալ ատենագրութեան մը
վրայ ու է գիտողութիւն չը լսուիր այլ ևս:
Ուստի Այվազեան Էֆէնտի գիրն առ ոչինչ
պէտք է համարիլ և նկատողութեան զուրկ:

Երեսփոխանը յամենուտ ձայնակցելով
Չօգանեան Էֆէնտի, Ժողովն ԿՐ ՄԵՐԺԷ լսել
Ա. Այվազեան Էֆէնտի գիտողութիւններն:

Հարցագիր երեսփոխան Ս. Էֆէնտի փա-
վազեանի առ Ազգ. Վարչութիւնն ի մասին
Տնտեսական Խորհրդոյ պաշտօնական ծանուց-
ման:

Ատենապետ Էֆէնտի հրաւիրանօք Ա-
տենագիր Էֆէնտի կընթեանու առ Ազգ.
Վարչութիւնն ուղղեալ Ս. Էֆէնտի փափազ-
եանի հետեւեալ հարցադիրն:

Հարցումն առ Ազգային Վարչութիւն

Ազգային թերթերուն մէջ Տնտեսա-
կան Խորհրդոյ պաշտօնական ծանուցումը կար-
գացի, հրատարակուեալ վերնագր-
ով, անցեալ Մայիս ամսոյ վերջերը:

Տնտեսական Խորհրդոյ այդ ծա-
նուցման վրայ կը պարտաւորեմ հարցնել

1—Տնտեսական Խորհրդոյ ի՞նչու
համար Տրոյ կանոնագրին հակառակ 13
տարւան յետեւեալ տրոյ հաւաքման հա-
մար յատուկ հաւաքիչներ կ'որոշէ, մինչ-
դեռ կանոնագրին 6-րդ յօդուածին զօ-
րութեամբ թաղ. Խորհրդոյ կը վերաբե-
րի Տրոյ հաւաքումը:

2—Տնտեսական Խորհրդոյ որո՞վ իշ-
խանութեամբ ի պաշտօնէ կը ծանուցա-
նէ թէ Ուսումնական Խորհրդոյ Ազգային
բաժնադրոյն ուսումնարանիմը հաստատ-
ման ծրագիրը յետաձգուած է Կեդր.
Մետուկի անյուսադիր կացութեան պատ-
ճառաւ: Արդեօք Վարչութիւնն այդպի-
սի որոշում և յանձնարարութիւն ըրած
է Տնտես. Խորհրդոյ:

3—Տնտեսական Խորհրդոյ որո՞վ
իշխանութեամբ կը ծանուցանէ թէ Կեդր.
Մետուկի անյուսադիր կացութեան պատ-
ճառաւ Եկեղեցական դասարանի ընդարձ-
ակման խնդիրն զոր խառն ժողովն ըր-
ած է, յետաձգուած է: Արդեօք խառն
Ժողովն իւր որոշմանց գործադրութեա-
նը համար Տնտես. Խորհրդոյ հաւանու-
թիւնն ստանալ կ'սպասէ, կամ թէ
խառն Ժողովն այդ խնդիրն իրրեւ ծրա-
գիւր յղած է առ Տնտես. Խորհրդոյ,
գրամականի մասին անոր կարծիքը ըս-
տանալու համար, արդեօք իրաւասու-
թիւն ալ տուած է ընդունիլ կամ մեր-
ժելու զայդ ծրագիր, և մինչև ի պաշ-
տօնէ ծանուցանելու Հասարակութեան
թէ յետաձգուած է խառն Ժողովոյ այդ
որոշումը կամ ծրագիրը:

Ազգային Երեսփոխան
Ս. Պ. Պ. Փախազեան

10 Յունիս 1883

Ժողովը ըստ օրինի ԿՈՐՈՇԷ՝ յղել սոյն հարցադիրն առ Ազգային Վարչութիւն մինչև յաջորդ նիստ պատասխանն ստանալու համար :

Խնդիր տարածման ատենագրութեանց .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իշխման Սրբազանի առաջարկութիւնը ընդունելէ յետոյ, կը մնայ մեզ զբաղել ատենագրութեանց ծաւալման խնդրովն, զոր պահ մ'առաջ յարոյց Սուրենեան էֆէնտի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կը կարծուի թէ մեր Ելեմոից Յանձնախումբը միմիայն Ազգային ժողովոյ ծախուց մասն տնօրինելու պաշտօն ունենայ, և ահա ասոր համար նախորդ Տնտեսական տեսչութիւնը առարկեր է թէ ատենագրութեանց հսկողութիւնն անոր չը պատկանիր : Բայց այս համոզումը սխալ է : Ելեմոից Յանձնախումբը պարտի տէր կենալ բոլոր տպեալ և անտիպ ատենագրութեանց, հաւաքել բոլոր ինչ որ այս ժողովոյ կը վերաբերի և զանոնք արձանագրել տալով յատուկ տուժարաց մէջ, պահել մասնաւոր դիւանի մը մէջ : Ելեմոից Յանձնախումբը պէտք է նաև տէր կենայ ատենագրութեանց վաճառման, անոնց հաշիւները բռնէ, վերջապէս կանոնաւոր վիճակի մը մէջ դնէ զանոնք և Ազգային ժողովը պէտք է իւր վճարման հաստատէ Ելեմոից Յանձնախումբի այս իրաւունքը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Փափաքեան էֆէնտի կըսէ թէ Ելեմոից Յանձնախումբը պաշտօնը միմիայն ստակ առնուլ և տալ չէ, այլև Դիւանական և ժողովոյ դոյից պահպանման հսկել և այլն : Բայց այս մասին ժողովոյ կողմանէ նոր որոշում մը տալու հարկ չեմ տեսներ ես, վասն զի Ազգային ժողովը

արդէն այս պաշտօնն յանձնած է յիշեալ Յանձնախումբին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հետեւաբար կը խընդրեմք Ելեմոից Յորդնտիր Յանձնախումբէն որ իւր պաշտօնը իւր բովանդակ ընդարձակութեամբ գործադրէ :

Առաջարկութիւն Երեսփոխան Մարգար Էֆէնտի Քուլաքսըզեանի, ի մասին հաստատութեան կայսրածական մնայուն հոգաբարձութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մեր Յորդնտիր Երեսփոխաններէն Քուլաքսըզեան էֆէնտի կողմանէ հետեւեալ զրաւոր առաջարկն ներկայացուած է Դիւանին, զոր Ձեզ պիտի ընթեռնու Ատենագրութիւն էֆէնտին :

Մեծապատիւ Ատենագրութիւն էֆէնտի Ազգ. Երեսփոխանական ժողովոյ .

Յայտնի է որ Մայրաքաղաքիս եկեղեցեաց և վարժարանաց և այլ հաստատութեանց ինչ կալուած և եկամուտ ունենալնուն վրայ որոշ մի տեղեկութիւն չունի Ազգ. ժողովը : Ես կ'առաջարկեմ որ ասոնց ամենուն մի ցուցակը շինուի յատկապէս կարգեալ մի Յանձնախումբի միջոցաւ, և ապա մի մնայուն և թոշակաւոր հոգաբարձութիւն զանոնք տրնտեսէ Ազգ. ժողովէդ խմբագրեալ և վաւերացեալ օրէնքով :

Ազգ. Երեսփոխան
Մ. Չ. Քուլաքսըզեան

10 Յունիս 1883

Ղալաթիա

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Քուլաքսըզեան էֆէնտի նոր երեսփոխան ըլլալով, տեղեկ չէ կարծեմ Սահմանադրութեան օրինաց : Այդ

առաջարկեալ պաշտօնն արդէն կը պատկանի Կտակոց Հոգաբարձութեան, որ մէջ էվզաֆ ըսել է, ապա թէ ոչ ես սիրով պիտի համակերպէի այդ առաջարկութեան : Միայն կը ցախմ որ այս տարի այդ Մարմինն չընտրուեցաւ տակաւին :

Այս մասին ուրիշ խօսք ուղղով չլինելով, Ս. Փափաքեան էֆէնտի առաջարկութեամբ ԿՈՐՈՇՈՒԻ Քուլաքսըզեան էֆէնտի առաջարկն յղել Ազգային ժողովոյ Կալուածոց Դիւանին :

Յայտարարութիւն յԱտենագրութեան ի մասին Համարատուութեան Ազգ. Վարչութեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մեր Օրակարգի Գ. խնդիրն է, ինչպէս գիտէք, Վարչութեան համարատուութիւնը, որոյ մասին ունեցած տեղեկութիւնս սա է : Քաղաքական ժողովոյ անդամներէն Պապի էֆէնտի Պապօեան բերանացի կերպով յայտնեց ինձ թէ Քաղաքական ժողովն յանձնարարած էր Տնտեսական խորհրդին Կեդրոնական Մտուկի հաշուեցոյցն տալ իւր վերջի նստին մէջ մեծամասնութիւն չկարենալով ունենալ, չէ կրցած աւարտել այդ աշխատութիւնը, հետեւաբար Վարչութիւնը կը խօստանայ յառաջիկայ նստին բերել իւր համարատուութիւնը :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍԿՈՊՈՍ. — Շընորհալու եմք Վարչութեանն որ այս յատուած մասին տեղեկութիւն կը հաղորդէ մեզ Պապի Պապօեան էֆէնտի բերնով, սակայն բանի որ գիտէր թէ մեր Օրակարգին մէջ ունիմք այս Համարատուութեան խնդիրն, ըստ օրինի պէտք էր գրաւոր կերպիւ հաղորդել մեզ իւր բացատրութիւնները :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Օրէնքը կը տը-

րամադրէ որ Ազգային ժողովոյ բացումէն առաջ Նախագահ Սրբազան պէտք է այս տեղանին վրայ բերէ Երեսփոխանական նոր ընտրութեանց տեղեկագրերն և Վարչութեան համարատուութիւն և ապա կարգաւ իւր բացման ճառն : Ես առջի նստին մէջ ընաւ չը խօսեցայ, բայց երկրորդ նստին ի դիւանէ յայտարարեցի օրինաց այս տրամադրութիւնը : Սակայն այս երրորդ նիստն է և տակաւին պատահաւ չէ այն, մինչեւ իսկ Վարչութիւնը չէ հաճած այս յատուածն պատճառն գրաւոր հաղորդել ժողովոյս և մինչեւ անգամ իրենք ներկայ չեն : Ըստ իս, ժողովս պէտք է ցաւ յայտնէ այս յատուածն համար և կը յաւանք թէ մինչեւ յառաջիկայ նիստ կը բերէ իւր համարատուութիւն :

(Երեսփոխանք բացատրութիւն կը խընդրեն Վարչութեան ներկայ անդամներէն) :

ՀԱԶԱՐԵԱՆ Կ. ԷՖ. — (Անդամ Քաղաքական ժողովոյ) Քանի որ Ատենագրութիւն էֆէնտին յայտնեց թէ Վարչութիւնը յաջորդ նստին իւր համարատուութիւնը պիտի ներկայէ ժողովոյդ և միանգամայն այս յատուածն ստանձառն ծանոց Պապի Պապօեան էֆէնտի միջոցաւ, կարծեմ թէ մեր կողմանէ ուրիշ բացատրութեան հարկ չը մնար այլ եւս :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Հարկ էր որ այդ ծանօթութիւնն Վարչութեան կողմանէ գրաւոր կերպիւ ներկայանար ժողովոյս :

(Հաղարեան Կ. էֆէնտի սոյն յայտարարութեան վրայ այլ ևս խօսք ուղղով չը գրաւորեալ, խնդիրը կը փակուի, յաջորդ նստին Վարչութեան համարատուութիւնն ստանալու պայմանաւ) :

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Քանի որ մեր օրակարգն սխառեցաւ և ժողովոյ փակման

ժամը հասած է, կ'առաջարկեմ որ յաջորդ նստին ձեռնարկեմք անմիջապէս Նախագահական ճամբին ի պատասխան Ազգային ժողովոյ կողմանէ ներկայանալի ուղերձին խմբագրութեան զոր պէտք է յանձնել խմբագրական Դիւանին: Ուստի յաջորդ նստին մեր Օրակարգն պէտք է լինի:

1. Համարատուութիւն Աւարջութեան:
2. Պատրաստութիւն ուղերձի ի պատասխանի Նախագահական ճամբին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Սոյն ուղերձի խմբագրութիւնն ոչ թէ խմբագրութեան, այլ Ատենապետաց Դիւանն է որ կը պատրաստէ: արդ քանի որ Ատենապետաց Դիւանն ցարդ կազմուած չէ, պէտք է այս մասին ու եւ զժողովութիւն չը յորուցանելու համար հրաւիրել Նախարանիչ Դիւաններն որպէս զի յառաջիկայ նստին բացման ժամէն 2—3 ժամ յառաջ գումարելով՝ ընտրեն խորհանց տալեւնապետներն եւ ծանուցանեն ժողովոյ, որպէս զի ապա ուղերձին խմբագրութեամբը կարենայ դրապիլ Ատենապետաց Դիւանն:

Փափաղեան Էֆէնտի յայն առաջարկին յամենուստ կրկնուելով, ժողովն կորոշէ ըստ այնմ հրաւիրել Նախարանիչ Դիւանաց անդամներն եւ յառաջիկայ նստին Օրակարգն ընել:

1. Համարատուութիւն Վարչութեան:

2. Պատրաստութիւն ուղերձի ի պատասխանի Ս. Պատրիարք Հօր Նախագահական ճամբին:

3. Նախորդ շրջանէն Մնացած խնդիր:

Դ. Բացակայութիւնը

Ատենապետ Էֆէնտի ժողովոյ կը հաղորդէ այս նստէն երրորդ բացակայութիւն ունեցող հետեւեալ երեսփոխանաց անուններն

Խորէն Քչեց. փէշիփանեան
Գէորգ Էֆ. Ապտուլահ
Սիմօն Էֆ. Ֆէլէկեան
Գաբրիէլ Էֆ. Նորատունկեան
Տօբթ. Կ. Էֆ. Հիւնքեարպէյէտեան
Յարութիւն Էֆ. Չերքեղեան

եւ կը յորէ թէ այս անգամ յատուկ կոչնազիր պիտի յղուի անոնց, իրազարաց միջոցաւ իրենց անուններն ծանուցանելով հանդերձ:

Ատենանը կը վերնաց ի ժամ 9 1/2, յաջորդ նիստն 13 օրէն գումարելու սրահամբ:

Ատենադպիր
Մ. ՋԵՐԱՋ
Ատենապետ
Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ

ԱՋԴԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՆԴԱՄԲ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1. Տ. Գրիգոր	Ս. Եղիակ.	Մինթանճեան	Ա. Արեւ-դէտ
2. » Յակոբ	Ծ. Վարդ.	Ս. Փափաղեան	Ա. Արեւ-դէտ
3. » Յովհաննէս	»	Փափաղեան	»
4. » Յովնէֆ	»	Այվաղեան	Բ. »
5. » Արիստակէս	Ա. Քահ.	Գաբրիէլեան	»
6. » Արիստակէս	»	Չիլմէճեան	»
7. » Գրիգոր	Ա. »	Արամեան	»
8. » Թադէոս	»	Սիմօնեան	»
9. » Խաչատուր	»	Տ. Գաբրիէլեան	»
10. » Մարութ	Ա. »	Ռափայէլեան	»
11. » Մինաս	»	Պէղաղեան	»
12. » Միքայէլ	Ա. »	Վարժապետեան	»
13. » Յովհաննէս	Ա. »	Հիւնքեարպէյէն. Բ. Արեւ-դէտ	»
14. » Յովհաննէս	»	Շահապեան	»

ԱՆԴԱՄԲ ՔԱՂԱՔՍԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1. Աղնաւորեան	Յովհաննէս	Էֆէնտի	»
2. Այվաղեան	Տօբ. Նշան	»	Բ. Արեւ-դէտ
3. Գրըճճեան	Գէորգ	»	»
4. Թորոսեան	Յովհաննէս	»	Ա. Արեւ-դէտ
5. Խորրրեան	Գրիգոր	»	»
6. Խօրատանճեան	Թափմա	»	»
7. Հաղարեան	Կարապետ	»	»
8. Հալաճեան	Բալսեղ	»	Բ. Արեւ-դէտ
9. Մաքսուտեան	Սիմօն	Պէլ	Ա. »
10. Մամիկոնեան	Միքայէլ	Էֆէնտի	»
11. Պապօեան	Պապի	»	»
12. Սիմօնաճեան	Գէորգ	»	»
13. Փէշափաճեան	Տօբթօր Տիգրան	»	»
14. Բիւրքճիկապեան	Կարապետ	»	»

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. — Բացակայութիւնք .
2. — Վաւերացումն նախորդ շրջանի ժէ. եւ ներկայ շրջանի Բ. նիստերու Ատենադրութեանց .

ՕՐԱԿԱՐԳ

Ա. — Ընտրութիւն նախաքննիչ Քիւանաց .

Բ. — Ընտրութիւն ելեւմտից յանձնախմբի Ազգ. ժողովոյ .

Առաջարկութիւն Տ. Մ. Եպիսկ. Իգմբրեանի , ի մասին տպագրութեան 1860 — 70ի Ազգային ժողովոյ ատենադրութեանց .

Հարցադիրք Երեսփոխան Աւետիս Էֆէնտի Թնկրբեանի .

Դիտողադիր Աբրահամ Էֆէնտի Այվազեանի , ի վերայ ժՁ. նիստի ատենադրութեան .

Հարցադիր Երեսփոխան Ս. Էֆէնտի Փառաղեանի առ Ազգ. վարչութիւնն , ի մասին Տնտեսական խորհրդոյ պաշտօնական ծանուցման .

Առաջարկութիւն Երեսփոխան Մարգար Էֆէնտի Գուլազարեանի , ի մասին հասարակութեան մի կալուածական միջոցն հողաբարձութեան .

Յայտարարութիւն յԱտենապետէ ի մասին համարատուութեան ազգ. վարչութեան .

Գ. բացակայութիւն :

